ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 35 - Ա
06 մարտի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 80 – Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԱՐՈՒԽԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ, 68-րդ հոդվածի 7-րդ և 67-րդ հոդվածի առաջին մասերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41- Ա որոշման պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 1999 թվականի սեպտեմբերի 2-ի «Գեղարքունիքի մարզային առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունների նոր խմբագրությամբ կանոնադրությունների հաստատման մասին» N80-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սարուխանի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

4.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 17095000 (տասնյոթ միլիոն ինսուն հինգ հազար) դրամ, որը կազմում է 17095 (տասնյոթ հազար ինսուն հինգ) հատ 1000 (մեկ հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության թողարկած բոլոր 17095 (տասնյոթ հազար ինսուն հինգ) հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են, ոչ փաստաթղթային:

2. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սարուխանի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սարուխանի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Մ. Գևորգյանին՝ սեղմ ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Սարուխանի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

հավելված

Կազմված է .....2015թ.
բաղկացած է (երկու) թերթից
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ_____

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2015 թ. Մայիս ի 6 ի
N 35-Ա որոշմամբ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

_____ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական
գրանցման գործակալության _____
տարածքային բաժնի կողմից _____

գրանցման թիվ _____
վկայական _____
ՀՎՎՀ _____
թիվ N_____ փոփոխությունը
գրանցված _____
թիվ N_____ փոփոխությունը
գրանցված _____

Պետական ռեգիստրի _____
տարածքային բաժնի կողմից

_____ _____

«ՍԱՐՈՒԽԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն)

4.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 17095000 (տասնյոթ միլիոն ինսուն հինգ հազար) դրամ, որը կազմում է 17095 (տասնյոթ հազար ինսուն հինգ) հատ 1000 (մեկ հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության թողարկած բոլոր 17095 (տասնյոթ հազար ինսուն հինգ) հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են, ոչ փաստաթղթային:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Սարուխանի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության (գրանցված 01.09.1999թ., գրանցման թիվ 70.140.00561, թիվ 0023 փոփոխությամբ գրանցված 08.12.2012թ.) բաղկացուցիչ մասը: